ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2023թ. **N _____- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 23-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխել «Երևան» բժշկագիտական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության:
2. Հաստատել «Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել «Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության անվանափոխման գործընթացների իրականացումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հավելված

Կազմված է 17.05.2023թ. և բաղկացած է 2 թերթից

Տպագրված է ընդամենը 3 օրինակ

ՕՐԻՆԱԿ _____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Երևան քաղաքի ավագանու

___ . _____ 2023թ.

թիվ _____-Ա որոշմամբ

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ,
Երևանի քաղաքապետի պաշտոնակատար՝

_____ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 19.03.2004թ.
գրանցման համար՝ 222.120.00271
հարկ վճարողի հաշվառման համար՝
01002597
21.07.2010թ. գրանցված
կանոնադրության
թիվ _____.____ փոփոխությունը
գրանցված է իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից

“_____” _____ 2023 թ.

Աշխատակից՝

_____ _____

«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

փակ բաժնետիրական ընկերության

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կանոնադրության տիտղոսաթերթի վրա ««ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» բառերը փոխարինել ««ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» բառերով:

2. Կանոնադրության 1.1-րդ կետում ««ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերությունը (հետագայում ընկերություն)» բառերը փոխարինել ««ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերությունը (նախկին անվանումները՝ «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերություն, «ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերություն, հետագայում ընկերություն)» բառերով:

3. Կանոնադրության 1.7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.7. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝	«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերություն
կրճատ՝	«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
ռուսերեն լրիվ՝	Закрытое Акционерное Общество МЕДИЦИНСКО-НАУЧНЫЙ ЦЕНТР "ЕРЕВАН"
կրճատ՝	ЗАО МЕДИЦИНСКО-НАУЧНЫЙ ЦЕНТР "ЕРЕВАН"
անգլերեն լրիվ՝	“YEREVAN” MEDICAL AND SCIENTIFIC CENTER Closed joint-stock company
կրճատ՝	“YEREVAN” MEDICAL AND SCIENTIFIC CENTER Closed J-S Company»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերության 21.07.2010թ. գրանցված կանոնադրության (փոփոխությունները գրանցվել են 04.07.2012թ., 08.02.2013թ., 20.12.2022թ. և 22.02.2023թ.) բաղկացուցիչ մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 18-ի հ.651-Ա որոշման՝ «Լևոն Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միանալով անվանափոխված «Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությանը:

Հաշվի առնելով, որ «Լևոն Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է ոչ միայն մասնագիտական հիվանդանոց, այլ նաև գիտահետազոտական կենտրոն, որտեղ կատարվում են գիտական աշխատանքներ և համակարգվում ու ֆինանսավորվում են գիտական կոմիտեի կողմից, նպատակահարմար է գտնվել «Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը վերանվանել «Երևան» բժշկագիտական կենտրոն փակ բաժնետիրական ընկերություն՝ գիտահետազոտական կենտրոնի գործառույթները պահպանելու և զարգացնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ